# MA-SIS — ՄԱ-ՍԻՍ — N° 11

GAZETTE DE LA COMMUNAUTÉ ARMÉNIENNE DE LILLE, SEPTEMBRE– DECEMBRE 2011
ԼԻԼԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ, ՍԵՊՏԵՄԲԵՐ – ԴԵԿՏԵՄԲԵՐ 2011

## ASSEMBLÉE GÉNÉRALE DU 8 OCTOBRE 2011 DE L'ASSOCIATION *ARARAT*

Présents : Louisette Lamarche, Garik Galstyan, Haïk Gambarian, Anna et Seyran Shirinyan, Christina et Karen Zakarian, Tatevik Bazinian, Vahe Mughnetsyan, Narine et Edouard Bazinian, Karen et Karine Mkhitaryan, Gayane et Vardan Mardoyan, Margarit Mkhitaryan, Jacqueline Kasparian, Jacqueline et Razmik Lmntsian, Tamar et Dikran Hanonik, Armine Khachatryan, Armen Mkrtchyan, Lusine et Samvel Ghazaryan

**Le bilan d'activité de l'année 2010/2011**

En 2010-2011, 29 familles ont cotisé à l'association *Ararat*.

. Les cours d'arménien pour les grands ont perdu peu à peu leur public tout au long de l'année au point de nous poser la question de savoir s'il fallait les continuer pour l'année qui va commencer.

. Susanna Mughnetsyan nous a quittés pour rejoindre sa fille à Bruxelles et, pour l'instant, nous n'avons pas encore trouvé personne pour la remplacer.

. Pour les plus petits, Tamar Hanonik a démarré des cours sur l'alphabet arménien avec 4 à 6 enfants.

. Narine et Tatevik Bazinian ont poursuivi les cours de français jusqu'au mois de mai 2011.

. Les permanences de l'association se sont poursuivies toute l'année.

. Nous n'avaons pas organisé à Lille la messe de Noël. Peu d'Arméniens de Lille ont voulu et ont eu la possibilité de suivre celle de Bruxelles.

. Pour le 8 mars, quelques unes d'entre nous se sont rendues à Tourcoing pour voir la pièce *Elles-mêmes*, puis nous avons visité l'exposition intitulée « De femmes en femmes » à l'Hospice comtesse de Lille.

. Pour commémorer le génocide des Arméniens, le 23 avril nous avons diffusé le film du spectacle *Ararat mon amour* dans la salle de cinéma du Fort de Mons à Mons en Barœul. Puis le lendemain, nous sommes allés à une vingtaine de personnes à la messe de Pâques à Bruxelles et en sortant avons défilé jusqu'au Khatchkar à proximité pour commémorer encore la mémoire des victimes du génocide.

. C'est à plus de 20 personnes que nous nous sommes rendus au Parc des cultures « Mosaïc » pour fêter la fin de l'année scolaire. Par un superbe temps, nous avons pique-niqué et joué avec les enfants.

. Aucun numéro de la gazette n'a pu être écrit faute de temps.

L'assemblée générale agrée à l'unanimité le bilan d'activité 2010-2011.

**Le bilan financier de l'année 2010 / 2011**

Pour information, le bilan financier de l'année précédente s'élève à 1205,81 € au lieu de 1455,81 €, le montant en dépense réalisé pour constituer le versement pour le compte sur livret n'ayant pas été comptabilisé.

## «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹՅԱՆ 2011 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Ընդհանուր ժողովին ներկա էին՝ Լուիզեթ Լամարշը, Գարիկ Գալստյանը, Հայկ Ղամբարյանը, Աննա և Սեյրան Շիրինյանները, Քրիստինա և Կարեն Զաքարյանները, Տաթևիկ Բազինյանը, Վահե Մուղնեցյանը, Նարինե և Էդուարդ Բազինյանները, Կարինե և Կարեն Միխիթարյանները, Գայանե և Վարդան Մարդոյանները, Մարգարիտ Միխիթարյանը, Ժակլին Կասպարյանը, Ժակլին և Ռազմիկ Լմնցյանները, Թամար և Դիկրան Հանոնիկները, Արմինե Խաչատրյանը, Արմեն Մկրտչյանը, Լուսինե և Սամվել Ղազարյանները:

**Միության գործունեությունը 2010- 2011 թթ.**

2010- 2011 թթ. «Արարատ» միությանն անդամագրվել է 29 ընտանիք:

. Տարվա ընթացքում միջին տարիքի երեխաների հայոց լեզվի դասերի հաճախելիությունն աստիճանաբար նվազել է, ինչն էլ հարց առաջացրեց, թե արժե՞, արդյոք, հաջորդ ուսումնական տարում շարունակել այդ դասընթացները:

. Սուսաննա Մուղնեցյանը մեկնել է Բրյուսել՝ աղջկա մոտ, և մենք առայժմ չենք կարողացել գտնել փոխարինող մասնագետ:

. Ամենափոքրիկների համար Թամար Հանոնիկը սկսել է հայոց այբուբենին ծանոթանալու դասերը, որոնց մասնակցում են 4-6 երեխա:

. Նարինե և Տաթևիկ Բազինյանները շարունակել են ֆրանսերենի դասերը մինչև 2011թ. մայիս ամիսը:

. Միության կիրակնօրյա հավաքները չեն դադարել ամբողջ տարվա ընթացքում:

. Այս տարի ձեռնպահ մնացինք Լիլում Սուրբծննդյան պատարագ կազմակերպելուց: Սակավաթիվ լիլահայեր ցանկություն և հնարավորություն ունեցան մասնակցելու այդ արարողությանը՝ Բրյուսելի հայկական եկեղեցում:

. 2011թ. մարտի 8-ին Թուրքուեն քաղաքի թատրոնում դիտեցինք «Կանայք՝ իրենցով» ներկայացումը, այնուհետև այցելեցինք Լիլի Կոմսուհու հոսպիս թանգարանում ցուցադրվող «Կնոջից՝ կին» ցուցահանդեսը՝ նվիրված Կանանց միջազգային օրվան:

. Ապրիլի 23 ին Մոնս ան Բարոլի Ֆորտ դը Մոնսի կինոդահլիճում ցուցադրեցինք «Արարա՛տ, իմ սեր» ֆիլմը՝ նվիրված ցեղասպանության զոհերի հիշատակին: Հաջորդ օրը 20 հոգանոց խմբով մեկնեցինք Բրյուսել՝ Սուրբ Զատիկի պատարագին մասնակցելու: Արարողությունից հետո երթով քայլեցինք մինչև մոտակա խաչքարը՝ մեկ անգամ ևս հարգանքի տուրք մատուցելու Մեծ եղեռնի զոհերի հիշատակին:

. Ուսումնական տարվա ավարտը նշելու կապակցությամբ ավելի քան քսան հոգով եղանք «Մոզայիկ» մշակույթների զբոսայգում, ուր հրաշալի եղանակը հնարավորություն տվեց զբոսախնջույք և երեխաների համար տարբեր խաղեր կազմակերպել:

. Ժամանակի սղության պատճառով մեր պարբերականի ոչ մի համար այդպես էլ լույս չտեսավ:

Ընդհանուր ժողովը միաձայն հաստատեց միության 2010-2011 թթ. գործունեությունը:

Au 23 septembre 2011, l'association a récolté 690,47 € et a dépensé 683,40 €. Cette baisse d'activité financière correspond à une baisse du nombre de familles adhérentes, et à l'organisation de sorties de proximité beaucoup moins coûteuses. L'association n'a pas porté non plus de spectacles contrairement à d'autres années.

Le produit des adhésions s'est élevé à 180 €. La vente de gazettes à 28 €, les participations aux sorties de la fête des femmes et à la séance de cinéma du 23 avril à 155 €, et des dons à 117 €. La subvention de la ville de Mons en Barœul et le solde de la subvention sur la fête du pain se sont élevé à 210,47 €.

Lors du goûter traditionnel après l'assemblée générale annuelle
Ավանդական համտեսում՝ տարեկան հաշվետու ժողովից հետո

Les dépenses se sont réparties comme suit : 73,70 € pour l'assurance de l'association, 11 € pour les frais bancaires, 126,67 € pour l'assemblée générale 2010/2011, 164 € pour la sortie du 8 mars, 240,97 € pour la diffusion du spectacle *Ararat mon amour*, 40 € pour l'achat de petits livres touristiques sur l'Arménie, 27,06 € pour la SACEM pour le film diffusé.

Le compte sur livret ouvert en 2010 s'élève à 253,25 €. En intégrant cette somme et le solde bancaire de l'année précédente, le solde disponible au 23 septembre 2011 s'élève à 1216,13 €.

L'assemblée générale agrée à l'unanimité ce bilan financier. Une erreur de remboursement de 62,46 € pour l'assemblée générale 2010/2011 compté deux fois en dépenses fera l'objet d'un remboursement.

L'ensemble de la comptabilité est consultable par les membres de l'association.

### Les coûts de l'adhésion, de la gazette et des cours d'arménien

. L'assemblée générale a été provoquée avant la reprise de toute activité afin que nous nous concertions sur la nécessité de reprendre ou non les cours d'arménien pour les enfants compte tenu du peu de fréquentation l'année dernière. Après discussion, il a été décidé de reprendre ces cours à compter du 6 novembre à titre expérimental jusqu'à la fin du mois de décembre. Une gratuité totale de ces cours est décidée pour encourager leur fréquentation.

. La reprise de cours de danse est évoquée plutôt pour les enfants. Une cotisation de 10 € par enfant et par trimestre est évoquée pour ces cours. Lusine Ghazaryan, en tant que professeur y réfléchit. Une demande pour les adultes existe également, mais Lusine ne souhaite pas y donner suite.

. Le coût de l'adhésion annuelle à l'association est maintenu à 15 euros. Celui de la gazette au prix coûtant plus quelques centimes d'euros pour compenser les numéros donnés aux officiels.

### 2010-2011թթ. ֆինանսական հաշվետվությունը

Նախորդ տարվա ֆինանսական մնացորդը կազմել է 1205,81 €: Եթե հաշվի առնենք խնայողական գրքույկի վրա փոխանցած գումարը, ապա այն կկազմի 1455,81 €:

2011 թ. սեպտեմբերի 23-ի դրությամբ միությունը մուտքագրել է 690,47 € և ծախսել 683,40 €: Ֆինանսական ակտիվության այս ցածր ցուցանիշը պայմանավորված է անդամագրված ընտանիքների քանակի նվազմամբ և ֆինանսական առումով քիչ ծախս պահանջող միջոցառումների կազմակերպմամբ: Ի տարբերություն նախորդ տարիների, միությունը չի նախաձեռնել ներկայացումների կազմակերպում:

Անդամավճարներից ստացված գումարը կազմել է 180 €, պարբերականի վաճառքից՝ 28 €, Կանանց տոնի միջոցառումից և ապրիլի 23-ի կինոցուցադրումից՝ 155 €, նվիրատվություններից՝ 117 €: Մոնս ան Բաղոլի ֆինանսական օգնությունը և Հացի տոնի ֆինանսական օժանդակության մնացորդը կազմել է 210,47 €:

Pour la « santé » de notre association / Մեր միության կենացը

Ծախսերը եղել են հետևյալը՝ միության ապահովագրություն՝ 73,70 €, բանկային ծառայություններ՝ 11 €, 2010/2011 թթ. ընդհանուր ժողովի գումարում՝ 126,67 €, Մարտի 8-ի տոնի առթիվ՝ 164 €, «Արարա՛տ, իմ սեր» ներկայացման տեսագրության ցուցադրում՝ 240,97 €, Հայաստանի մասին տուրիստական գրքույկների գնում՝ 40 €, ֆիլմի ցուցադրման իրավունքի տուրք (SACEM)՝ 27,06 €.

2010 թ. բացած խնայողական գրքույկի հաշվի վրա ունենք 253,25 €: Նախորդ տարվա բանկային հաշվի մնացորդի հետ 2011 թ. սեպտեմբերի 23-ի դրությամբ միությունն իր տրամադրության տակ ունի 1216,13 €:

Ընդհանուր ժողովը միաձայն ընդունեց ներկայացված ֆինանսական հաշվետվությունը: 2010/2011 թթ. ընդհանուր ժողովին երկայացրած 62,46 € վճարումը սխալմամբ ծախսերի մեջ երկու անգամ էր հաշվվել, և վճարած գումարը պետք է վերադարձվի:

Ցանկության դեպքում, ֆինանսական հաշվետվության մանրամասները կարող են տրամադրվել միության անդամներին:

### Անդամավճարների, պարբերականի և հայերենի դասերի սակագները

. Ընդհանուր ժողովը գումարվել է միության գործունեության վերսկսումից առաջ, որպեսզի հաշվի առնելով անցյալ տարվա ցածր հաճախելիության փաստը, կարողանանք համաձայնության գալ երեխաների համար հայերենի դասընթացները շարունակելու նպատակահարմարության մասին: Մտքերի փոխանակումից հետո որոշվեց նոյեմբերի սկզբից մինչև դեկտեմբերի վերջ դասերի համար սահմանել փորձնական ժամանակաշրջան: Հաճախելիությունը խրախուսելու համար որոշվեց դրանք դարձնել ամբողջովին անվճար:

### Les projets futurs et recherches de financement

. Un nouveau courrier a été adressé à Martine Aubry, Maire de Lille, à propos de la possibilité d'installer un khatchkar. Il lui a été remis par Siranouche. Nous n'avons pas eu de réponse pour l'instant.
. Une visite de la cristallerie d'Arques est évoquée pour fin octobre ou novembre lors des soldes de cette usine.
. Le concert de fin d'année d'Aznavour est évoqué pour la recherche d'un tarif de groupe pour des entrées.
. Rien n'est proposé pour commémorer le génocide le 24 avril, la fréquentation et les forces de l'association étant trop restreintes.
. Une nouvelle visite de Lille est souhaitée autour d'un musée (Charles de Gaulle, Napoléon…). L'objectif est de prendre connaissance des richesses qui nous entourent. Karen se propose de rechercher de la documentation.
. Un tournoi de nardi est souhaité pour avant la fin de l'année. Une compétition d'échecs est aussi discutée.
. Pour la Fête des femmes, une visite du Musée de la dentelle de Calais est décidée plutôt le samedi pour permettre aux femmes qui travaillent de faire cette découverte. Une visite du centre commercial *Marque avenue* est également envisagée.
. Le Centre d'art et de dialogue entre les cultures d'Orient et d'Occident (Fondation Boghossian) à Bruxelles est aussi repéré comme un lieu de visite potentiel.
. La pratique de sports tel que le volley-ball, le football, le ping-pong est souhaitée. Certains de nos membres pratiquent déjà ces sports avec plus ou moins de régularité. Une volonté de trouver un lieu pour une pratique régulière du volley-ball et du football est exprimée. Il est décidé la création d'une section sportive dans l'association et d'ajouter cela aux statuts de l'association. Karen Mkhitaryan et Karen Zakarian s'occuperont de cette section.
. L'envie de découvrir un grand château, par exemple Versailles ou Chantilly, reste pour une partie de nos membres. Le coût risque cependant d'être un frein. Si une opportunité apparaissait, nous la saisirons.

Tous les membres sortants de l'association sont reconduits dans leurs fonctions pour un nouveau mandat à l'unanimité.

Louisette Lamarche

## LE PREMIER TOURNOI DE NARDI

Lors de la dernière assemblée générale de notre association, nos membres ont souhaité organiser, tout le long de l'année, différents tournois qui permettront de réunir les Arméniens de Lille. Surtout que nous, les Arméniens, sommes un peuple « joueur ». Parmi les jeux on a évoqué les nardis, les dominos, les échecs, le tennis de table, le volley-ball et la belotte.

Le temps est arrivé de réaliser nos décisions. Garik Galstyan et Haïk Gambarian se sont chargés des préparatifs du premier tournoi de nardis. C'est un des jeux préférés des Arméniens et il n'a pas été étonnant qu'en très peu de temps plus de vingt personnes se soient inscrites pour jouer. Compte tenu de ce fait, nous avons décidé d'étaler le déroulement du tournoi sur deux semaines, parallèlement aux cours d'arménien qui, depuis l'automne 2011, ont été reportés du samedi au dimanche. Deux dimanches ont ainsi été attendus très prometteurs quant à la passion et au hasard.

. Հարց բարձրացվեց երեխաների համար վերսկսել պարի պարապմունքները, որոնց գինն առաջարկվեց սահմանել յուրաքանչյուր երեխայից եռամսյակում 10 €: Լուսինե Ղազարյանը կմտածի պարի դասատուի թեկնածուի առաջարկի մասին: Նմանատիպ պահանջարկ կա նաև մեծահասակների համար, բայց Լուսինեն նախընտրում է հետաձգել իր պատասխանը:
. Միության տարեկան անդամավճարի գումարը պահպանել նույնը՝ 15 €: Պարբերականի գինը կմնա համարժեք ինքնարժեքին՝ գումարած մեկ եվրոյից չանցնող մի փոքր հավելավճար, որպեսզի փոխհատուցվի պաշտոնական անձանց տրվող համարների գինը:

### Գալիք ծրագրեր և ֆինանսավորման հայթայթում

. Լիլի քաղաքապետ Մարտին Օբրիին մի նոր նամակ է ուղարկվել՝ կապված խաչքար տեղադրելու հնարավորության հետ: Սիրանուշն անձամբ է նամակը հանձնել: Մինչև օրս դեռ պատասխան չկա:
. Կա առաջարկություն կազմակերպել էքսկուրսիա Արքի բյուրեղապակու գործարան հոկտեմբերի վերջին կամ նոյեմբերին՝ գործարանի արտադրանքի գների զեղչման առաջարկի ժամանակահատվածում:
. Առաջարկվեց նաև փնտրել Ազնավուրի՝ տարեվերջին տեղի ունեցող համերգի տոմսեր՝ զեղչված գներով (կոլեկտիվ հայտով):
. Միության մարդկային ռեսուրսների և ուժերի անբավարար լինելու պատճառով ոչինչ չառաջարկվեց Եղեռնի տարելիցը՝ ապրիլի 24-ը, նշելու համար:
. Լիլ քաղաքի մեզ շրջապատող տեսարժան վայրերին ծանոթանալու նպատակով ցանկություն հայտնվեց կազմակերպել մի նոր էքսկուրսիա (Շառլ դը Գոլի, Նապոլեոնի թանգարաններ և այլն): Կարենը ստանձնեց համապատասխան տուրիստական նյութերի հայթայթման գործը:
. Առաջարկվեց նաև մինչև տարեվերջ կազմակերպել նարդու առաջնություն: Մտքեր փոխանակեցինք նաև շախմատի մրցաշարի մասին:
. Կանանց տոնի առթիվ որոշվեց այցելել Կալեի Ժանյակների ֆաբրիկան: Ընտրվեց շաբաթ օրը, որպեսզի աշխատող կանանց հնարավորություն տրվի մասնակցելու այս բացահայտմանը: Նպատակահարմար գտանք նաև այցելել «Մառք Ավենյու» առևտրի կենտրոնը:
. Որպես հեռանկարային այցելության վայր կարելի է ի նկատի ունենալ նաև Բրյուսելի Արվեստի և Արևելքի ու Արևմուտքի մշակույթների երկխոսության կենտրոնը (Պողոսյան հիմնադրամ):
. Ցանկալի կլիներ ազատ ժամերին զբաղվել սպորտային խաղերով՝ վոլեյբոլ, ֆուտբոլ, սեղանի թենիս: Միության որոշ անդամներ տարբեր հաճախականությամբ արդեն ներգրավված են այս մարզաձևերի մեջ: Ցանկություն կա փնտրել համապատասխան մարզադահլիճ՝ վոլեյբոլով և ֆուտբոլով պարբերաբար զբաղվելու համար: Որոշում ընդունվեց միության շրջանակներում ստեղծել մարզական սեկցիա՝ փոփոխություն կատարելով նրա կանոնադրության մեջ: Կարեն Մխիթարյանը և Կարեն Զաքարյանը կստանձնեն այդ սեկցիայի ղեկավարությունը:
. Որոշ անդամներ դեռ ցանկություն ունեն այցելելու նշանավոր մի որևէ ամրոց, օրինակ՝ Վերսալի կամ Շանթիյիի: Սակայն մեծ ծախսերը կարող են խոչընդոտ հանդիսանալ: Մենք կօգտագործենք առաջին իսկ հարմար առիթը:

Միության խորհրդի ներկայիս բոլոր անդամների գործունեությունը միաձայն երկարացվեց մինչև հաջորդ հաշվետու տարին:

Լուիզեթ Լամարշ

## ՆԱՐԴՈՒ ԱՆԴՐԱՆԻԿ ՄՐՑԱՇԱՐԸ

Վերջին ընդհանուր ժողովի ժամանակ մեր միության անդամները ցանկություն էին հայտնել տարվա ընթացքում կազմակերպել տարբեր տիպի մրցաշարեր, որոնք հնարավորություն

On s'est réjoui du fait que certains Arméniens, qui n'ont pas cotisé à l'association *Ararat*, se sont inscrits sur la liste des joueurs. Parmi ces vingt personnes on a compté trois Arméniennes courageuses. L'écart d'âge des participants a été important : de 22 à 72 ans. C'était d'autant plus agréable car ainsi les liens entre les générations se sont renforcés modestement et qu'un certain « échange d'expérience » entre elles s'est produit. Nous avons constitué cinq groupes de quatre personnes qui se sont battus pour le 1/8 de finale. Les jeux de ces deux dimanches se sont déroulés dans une ambiance très chaleureuse. Le nombre de supporters a été sans précédent et beaucoup de femmes sont venues pour encourager leurs maris. Après les cours, les enfants ont complété les rangs des supporters.

Le premier tournoi de nardis s'est clôturé par la finale du 27 novembre. Les deux premières places ont été attribuées à Achot et Vardan (père et fils) Mardoyan. Quant à la troisième place, elle a été occupée par Garik Galstyan. Notre novice et le plus jeune joueur Mihran s'est contenté de l'honorable mais maudite quatrième place. On a également eu des surprises, car quel tournoi n'en a pas ? Nous en avons dénombré deux. La première a concerné Razmik Lmntsian, un des meilleurs joueurs de nardi de Lille qui n'a pas réussi à passer la demi-finale. La deuxième a été la quatrième place de Mihran Hunanyan méconnu par beaucoup d'entre nous. Les vainqueurs des trois premières places ont reçu des cadeaux. Les autres participants ne sont pas restés à l'écart : des bouteilles de beaujolais nouveau ont été distribuées comme prix d'encouragement.

Les vainqueurs du tournoi de nardi : Garik (3e), Achot (1er), Vardan (2e)
Նարդու մրցաշարի հաղթողները՝ Գարիկը (3-րդ), Աշոտը (1-ին), Վարդանը (2-րդ)

L'organisation de ce tournoi de nardis peut être considérée comme plutôt réussie. D'autres manifestations du même genre peuvent se dérouler dans le même esprit et de la même façon. Les femmes ont proposé que, dans le futur, elles jouent séparément des hommes lors des tournois de nardis, car les forces ne sont pas égales. Nous espérons que pendant l'organisation d'autres tournois les participants soient plus disciplinés quant aux inscriptions et au respect des horaires. Nous remercions tous les participants, les supporters et, bien évidemment, la mairie de Mons en Baroeul pour nous avoir prêté des salles supplémentaires sans quoi le déroulement de ce tournoi n'aurait pas pu se faire normalement.

Garik Galstyan

կտան համախմբել լիլահայերին: Նամանավանդ, որ մենք՝ հայերս, «խաղացող» ազգ ենք: Խոսել էինք նարդու, դոմինոյի, շախմատի, սեղանի թենիսի, վոլեյբոլի և բլոտի մասին:

Ահա և եկավ ժամանակը՝ իրագործելու մեր ընդունած որոշումները: Գարիկ Գալստյանն ու Հայկ Ղամբարյանը ստանձնեցին նարդու անդրանիկ առաջնության կազմակերպման գործը: Նարդին հայերի համար շատ սիրված խաղաձև է, և բոլորովին զարմանալի չէր, որ կարճ ժամանակում քանից ավելի մարդ ցուցակագրվեց խաղալու համար: Հաշվի առնելով այս փաստը՝ որոշեցինք մրցաշարն անցկացնել երկու շաբաթվա ընթացքում՝ հայերենի դասերին զուգահեռ, որոնք 2011 թ. աշնանից շաբաթ օրվանից տեղափոխվել են կիրակի: Այսպիսով՝ երկու կիրակի օրերը պիտի լինեին շատ խոստումնալից՝ կրքերի և խաղի առումով:

Ուրախալի էր, որ մրցելու համար ցուցակագրվել էին նաև «Արարատ» միությանը չանդամագրված լիլահայեր: Քսան հոգու մեջ կային նաև երեք համարձակ հայուհիներ: Մասնակիցների տարիքային տարբերությունը շատ մեծ էր՝ 22-ից մինչև 72, որը նույնպես հաճելի փաստ էր, քանի որ դրանով ամրապնդվում է սերունդների միջև կապը և կատարվում յուրահատուկ «փորձի փոխանակում»: Կազմվեց չորսհոգանոց հինգ խումբ, որոնք պայքարեցին 1/8 եզրափակիչ մտնելու համար: Կիրակնօրյա երկու խաղերն էլ անցան շատ ջերմ մթնոլորտում: Երկրպագուների թիվն էլ էր աննախադեպ, և շատ կանայք եկել էին սատարելու իրենց ամուսիններին: Դասերից հետո երեխաները նույնպես համալրեցին երկրպագուների շարքերը:

Ամսի 27–ին տեղի ունեցած եզրափակիչ փուլով ավարտվեց ավանդական նարդու այս անդրանիկ մրցաշարը: Առաջին և երկրորդ տեղերը զբաղեցրեցին Աշոտ և Վարդան (հայր և որդի) Մարդոյանները, իսկ երրորդ տեղը բաժին ընկավ Գարիկ Գալստյանին: Միհրանը՝ մեր նորեկը և ամենաերիտասարդ խաղացողը, զբաղեցրեց պատվավոր, բայց նաև չարաբաստիկ չորրորդ հորիզոնականը: Եղան նաև անակնկալներ. չէ՞ որ առանց անակնկալի մրցաշար չի լինում: Դրանք երկուսն էին՝ Լիլի նարդու լավագույն խաղացողներից մեկի՝ Ռազմիկ Լմնցյանի կիսաեզրափակիչ չմտնելը և շատերին անծանոթ երիտասարդ Միհրան Հունանյանի գրաված չորրորդ տեղը: Առաջին երեք տեղերը գրավողներին հանձնվեցին մրցանակներ: Մյուս մասնակիցներն էլ անմաս չմնացին. նրանց բաժանվեցին խրախուսական «նվերներ»՝ թարմ «Բոժոլե»ի մեկական շշեր:

Նարդու մրցաշարի կազմակերպումը կարելի է համարել հաջողված: Այդ տիպի մյուս միջոցառումները հնարավոր կլինի անցկացնել նույն ոգով և ձևաչափով: Կանայք առաջարկեցին, որ ապագայում իրենց համար կազմակերպվի առանձին մրցաշար, քանի որ տղամարդկանց հետ ուժերը շատ անհամաչափ են: Հուսով ենք, որ գալիք միջոցառումների ժամանակ մասնակիցները կլինեն ավելի կարգապահ՝ ցուցակագրվելու և ժամանակը հարգելու առումով: Շնորհակալություն ենք հայտնում բոլոր մասնակիցներին, երկրպագուներին և, իհարկե, Մոնս ան Բարոլի քաղաքապետարանին՝ մեզ լրացուցիչ սրահներ տրամադրելու համար, որն էլ հնարավորություն տվեց մրցաշարն անցկացնել սահուն ձևով:

Գարիկ Գալստյան

Les joueurs de nardi après le tournoi / Նարդի խաղացողները՝ մրցաշարից հետո

## *ARMENIACA* : BASE DE DONNÉES INÉDITE CONSACRÉE AU PATRIMOINE MONUMENTAL ARMÉNIEN

Le 5 décembre 2011, à Bruxelles, dans le hall principal du site de « Tours et Taxis », a eu lieu l'inauguration de l'exposition « Les pionniers de l'étude du patrimoine architectural arménien ». C'est la quatrième ville qui l'a accueillie après Erevan, Venise et Milan.

Cette exposition est une sorte de compte-rendu du projet européen *Armeniaca* sélectionné et soutenu par la Commission Européenne dans le cadre du programme-cadre «Culture 2007-2013»[1]. Il est consacré à la préservation, à la numérisation et à la mise en valeur d'archives concernant le patrimoine architectural arménien.

Le coordinateur du programme *Armeniaca* est l'Union Générale Arménienne de Bienfaisance (UGAB). Ce projet s'inscrit dans la stratégie culturelle et politique de l'UGAB Europe qui vise à la sensibilisation des institutions européennes en matière de préservation et de protection du patrimoine monumental arménien. Dans le cadre du projet, l'UGAB a étroitement collaboré avec ses trois partenaires : le Centro Studi e Documentazione della Cultura Armena (CSDCA, Venise-Milan, Italie, fondé en 1976), l'Inside Europe (Belgique) et le Research on Armenian Architecture (RAA, Arménie).

Le vernissage, qui a été honoré par la présence d'environ 300 personnes, a commencé par une série de conférences. Le premier qui a pris la parole a été Nicolas Tavitian, responsable du bureau UGAB Belgique. Il a attiré l'attention sur la richesse unique du patrimoine architectural arménien dispersé dans des dizaines de pays du monde. L'existence seule de cette dispersion ne fait que compliquer la difficile tâche de sa sauvegarde. Ensuite, N. Tavitian a donné la parole à Bernard Coulie, professeur à l'Université Catholique de Louvain et son recteur de 2004 à 2009. Il est actuellement considéré comme le meilleur spécialiste belge du monde arménien. B. Coulie a souligné la place singulière de l'architecture arménienne dans le patrimoine mondial et sa contribution au développement des formes et des techniques architecturales du monde chrétien. Il a également évoqué une série de menaces auxquelles les monuments sont exposés : les catastrophes naturelles, l'abandon, la destruction intentionnée, les dommages causés par le temps et par les hommes, la restauration abusive.



[1] D'un budget de 400 millions d'euros, le programme *Culture* (2007-2013) de l'UE est consacré à des projets et des initiatives destinés à mettre à l'honneur la diversité culturelle de l'Europe et à améliorer son patrimoine culturel commun. Il a trois objectifs principaux: favoriser la mobilité transfrontalière des personnes travaillant dans le domaine de la culture; encourager la circulation transnationale des productions culturelles et artistiques et promouvoir le dialogue interculturel.
Pour plus d'informations sur le programme *Culture* vous pouvez consulter http://ec.europa.eu/culture/index_fr.htm.

## «ԱՐՄԵՆԻԱԿԱ» ՏՎՅԱԼՆԵՐԻ ՆՈՐ ՇՏԵՄԱՐԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆԸ

2011թ. դեկտեմբերի 5-ին Բրյուսելի «Թուր և Տաքսի» կենտրոնում տեղի ունեցավ «Հայկական ճարտարապետական ժառանգության ուսումնասիրության առաջամարտիկները» ցուցահանդեսի հանդիսավոր բացումը: Երևանից, Վենետիկից և Միլանից հետո Բրյուսելը ցուցահանդեսը հյուրընկալող չորրորդ քաղաքն էր:

Այս միջոցառումը մի յուրօրինակ հաշվետվություն էր «Արմենիակա» համաեվրոպական ծրագրի, որն ընտրվել և ֆինանսավորվել էր Եվրոհանձնաժողովի կողմից՝ «Մշակույթ 2007-2013»[2] ծրագրի շրջանակներում: Այն նվիրված էր հայկական ճարտարապետական ժառանգության մասին արխիվների պահպանման, համակարգման և արժևորման գործընթացին:

«Արմենիակա» ծրագրի գլխավոր կազմակերպիչն է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը (ՀԲԸՄ): Ծրագիրը համահունչ է ՀԲԸՄ-ի մշակութային և քաղաքական ռազմավարությանը, որի հետապնդած նպատակն է եվրոպական կառույցների ուշադրությունը սևեռել հայկական ճարտարապետական հուշարձանների պաշտպանության և պահպանման վրա: Այս ծրագրի շրջանակներում ՀԲԸՄ-ն սերտորեն համագործակցել է երեք գործընկերների հետ՝ 1976թ. գործող «Հայկական մշակույթի ուսումնասիրության և վավերագրության կենտրոնը» (ՀՄՈՒՎԿ, Միլան-Վենետիկ, Իտալիա), «Եվրոպայի ներսում» կազմակերպությունը (Բելգիա) և «Հայկական ճարտարապետության ուսումնասիրությունների կենտրոնը» (ՀՃՈՒԿ, Հայաստան):

Բացման արարողությունը, որին ներկա էին ավելի քան 300 այցելուներ, մեկնարկեց մի քանի ելույթներով: Առաջինը խոսափողին մոտեցավ ՀԲԸՄ-ի Բրյուսելի գրասենյակի պատասխանատու Նիկոլա Դավիթյանը: Նա հանդիսատեսի ուշադրությանը ներկայացրեց աշխարհի տասնյակ երկրներում սփռված հայկական ճարտարապետական ժառանգության եզակի հարստության փաստը: Այդ սփռվածությունն իսկ արդեն բարդացնում է նրա պահպանման դժվարին գործը: Այնուհետև Ն.Դավիթյանը խոսքը փոխանցեց Լուվենի կաթոլիկ համալսարանի պրոֆեսոր և նրա նախկին ռեկտոր (2004-2009) Բեռնար Կուլիին: Նա այսօր իրավացիորեն համարվում է Բելգիայի լավագույն հայագետը: Բ.Կուլին ընդգծեց հայկական ճարտարապետության ուրույն տեղը համաշխարհային մշակութային ժառանգության, և նրա ավանդը քրիստոնեական աշխարհի ճարտարապետական ձևերի և տեխնիկայի զարգացման մեջ: Նա նաև անդրադարձավ հուշարձանների վրա կախված մի շարք սպառնալիքներին՝ բնական աղետներ, լքվածություն, միտումնավոր ոչնչացում, ժամանակի և մարդու հասցրած վնասներ, վատորակ վերանորոգում:

DG Éducation et culture
Programme «Culture»

[2] 400 միլիոն բյուջեով Եվրոմիության «Մշակույթ (2007-2013)» ծրագիրը վերաբերում է այն նախագծերին ու նախաձեռնություններին, որոնց նպատակն է արժևորել Եվրոպայի մշակութային բազմազանությունը և բարելավել նրա ընդհանուր մշակութային ժառանգությունը: Ծրագիրն ունի երեք գլխավոր նպատակ՝ նպաստել մասնագետների միջպետական շարժունակությանը, սատարել մշակութային և գեղարվեստական ստեղծագործությունների շարժունությանը և նպաստել միջմշակութային երկխոսությանը:
Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել «Մշակույթ» ծրագրի կայքէջը՝ http://ec.europa.eu/culture/index_fr.htm:

C'est le célèbre historien Raymond Kévorkian qui a présenté le projet *Armeniaca*. Il a fait un survol général du site ouvert sur Internet, de sa riche base de données composée de documents (plans architecturaux, inscriptions épigraphiques, sources historiques, *etc.*) et photos d'archives sur l'architecture arménienne dont un certain nombre vient de collections privées. Sur un grand écran, R. Kévorkian a fait une démonstration du site et des possibilités de son système de recherche. Il a également fait connaître au public les noms des chercheurs et architectes qui, durant ces quarante dernières années, se sont penchés sur l'étude du patrimoine arménien dispersé. La base de données intègre ainsi les collections de Jean-Michel et Nicole Thierry (Paris), de Patrick Donabédian (Aix-en-Provence), de Raymond et Souren Kévorkian (Paris), de Research on Armenian Architecture, notamment d'Armen Hakhnazarian (Allemagne) et de Samvel Karapetyan (Erevan), du Centro Studi e Documentazione della Cultura Armena (Milano/Venise), notamment d'Adriano Alpago Novello.

Gayaneh Casnati, chercheuse au CSDCA et une des personnes les plus impliquées dans le projet Armeniaca, a fait une présentation générale des pionniers de l'étude de l'architecture arménienne. Ce sont leurs recherches sur plusieurs décennies qui ont permis de mener le travail complexe de sauvegarde et de restauration des œuvres architecturales arméniennes éparpillées sur plusieurs aires géographiques. Un certain nombre de photographies sont aujourd'hui uniques, car les monuments qu'elles ont immortalisés n'existent plus ou sont mal restaurés.

Bernard Coulie et Gayaneh Casnati après l'inauguration
Բեռնար Կուլին և Գայանե Կասնատին՝ շնորհանդեսից հետո

La soirée de vernissage s'est terminée par la première diffusion en Belgique du film documentaire *Armenian Legacy of Europe* qui présentait le riche patrimoine arménien en Europe de l'Est, notamment en Ukraine. C'est le fruit des efforts déployés par la *Fondation Renaissance* (Ukraine).

Le projet *Armeniaca* est né de la volonté de mettre en valeur un grand nombre de fonds d'archives existants consacrés au patrimoine architectural arménien dont une partie reste non déployée et se dégrade à cause du manque de finances. À l'ère digitale, on est en mesure de procéder à la sauvegarde de ces archives par leur numérisation et leur regroupement dans un site interactif accessible à tout public. Avec les moyens techniques existants, celui-ci est valorisé par le catalogage et l'indexation de documents, parfois uniques, à l'usage des chercheurs et architectes, mais aussi des étudiants, artistes et touristes.

Le programme *Armeniaca* a été officiellement inauguré le 13 octobre 2011, à Erevan, dans le centre de technologies créatives TUMO (le projet lui-même a débuté il y a deux ans, le 31 octobre 2009). Raymond Kevorkian, Samvel Karapetyan (directeur du RAA), Gayaneh Casnati et Hovik Kirzoghyan (créateur de ce site) ont présenté la nouvelle base de données des archives photographiques sur l'architecture arménienne compo-

«Արմենիակա» ծրագրին մեզ ծանոթացրեց ճանաչված պատմաբան Ռայմոնդ Կևորկյանը: Նա ընդհանուր գծերով ներկայացրեց ինտերնետային կայքէջը և նրա տվյալների հարուստ շտեմարանը՝ բաղկացած հայկական ճարտարապետությանը նվիրված փաստաթղթերից (ճարտարապետական գծագրեր, էպիգրաֆիկ արձանագրություններ, պատմական աղբյուրներ և այլն) և արխիվային լուսանկարներից, որոնց մի մասը գտնվում է մասնավոր հավաքածուներում: Մեծ էկրանի վրա Ռ. Կևորկյանը ցուցադրեց կայքէջը և նրա որոնման համակարգի հնարավորությունները: Նա ներկայացրեց այն հետազոտողներին և ճարտարապետներին, որոնք վերջին քառասուն տարիների ընթացքում զբաղվել են հայկական աշխարհասփյուռ հուշարձանների ուսումնասիրությունով: Տվյալների շտեմարանն այսպիսով ընդգրկել է Ժան-Միշել և Նիկոլ Թրիերիների (Փարիզ), Պատրիկ Տոնապետյանի (Էքս-ան-Պրովանս), Ռայմոնդ և Սուրեն Կևորկյանների (Փարիզ), ՀՃՈՒԿ-ի, մասնավորապես Հայկազ Հախնազարյանի (Գերմանիա) և Սամվել Կարապետյանի (Երևան), ՀՄՎՈՒԿ-ի (Միլան,Վենետիկ), հատկապես Ալպագո Նովելլոյի, հավաքածուները:

«Արմենիակա» ծրագրի մեջ ամենաընդգրկված մարդկանցից մեկը՝ ՀՄՎՈՒԿ-ի գիտաշխատող Գայանե Կասնատին, ընդհանուր առմամբ ներկայացրեց հայկական ճարտարապետության ուսումնասիրության առաջամարտիկներին: Տասնամյակներ տևած նրանց ուսումնասիրությունները հնարավորություն են ընձեռել կատարելու աշխարհագրական տարբեր տարածաշրջաններում սփռված հայկական ճարտարապետական կոթողների պահպանման և վերականգնման բարդագույն գործը: Որոշ լուսանկարներ այսօր բացառիկ են, քանի որ հավերժացրել են այլևս գոյություն չունեցող կամ էլ սխալ վերանորոգված հուշարձաններ:

Բացման արարողության երեկոն ավարտվեց Բելգիայում առաջին անգամ «Եվրոպայի հայկական ժառանգությունը» վավերագրական ֆիլմի ցուցադրությունով, որը ներկայացնում է Արևելյան Եվրոպայում, հատկապես Ուկրաինայում, գտնվող հայկական հարուստ ճարտարապետական ժառանգությունը: Սա «Վերածնունդ» հիմնադրամի (Ուկրաինա) ծավալած ջանքերի արդյունքն է:

«Արմենիակա» ծրագիրը ծնվել է՝ նպատակ հետապնդելով արժևորել մեծաթիվ արխիվային ֆոնդերը՝ նվիրված հայկական ճարտարապետական ժառանգությանը, որի մի մասը մնում է չհետազոտված և կործանվում է՝ ֆինանսական միջոցների պակասության պատճառով: «Թվայնացման» մեր ժամանակաշրջանը հնարավորություն է ընձեռում սկսել այդ արխիվների պահպանման գործը՝ թվայնացման և հասարակությանը մատչելի միասնական ինտերակտիվ կայքէջում համախմբելու միջոցով: Ներկայիս տեխնիկական միջոցների շնորհիվ կայքէջը արժևորվում է երբեմն եզակի փաստաթղթերի գույքագրման և ցանկագրման միջոցով, որոնք դրվում են ոչ միայն հետազոտողների ու ճարտարապետների, այլ նաև ուսանողների, արվեստագետների և զբոսաշրջիկների տրամադրության տակ:

sée d'environ 300 000 documents numérisés sur 40 000 monuments. Le 14 octobre, au musée de Toumanian à Erevan, a été inaugurée une exposition consacrée aux pionniers de l'étude de l'architecture arménienne conçue par Gayaneh Casnati. Celle-là devait ensuite circuler dans les autres pays du monde. C'est cette exposition qui a été présentée du 3 décembre 2011 au 7 janvier 2012 à Bruxelles.

Louisette Lamarche et le célèbre historien Raymaond Kévorkian
Լուիզեթ Լամարշն ու ճանաչված պատմաբան Ռայմոնդ Կևորկյանը

Ainsi, le lancement du site Internet bilingue (arménien et anglais) signifie la concrétisation d'un grand travail qui jette la base d'une future coopération internationale dont l'objectif sera de compléter en permanence la base de données existante et d'élargir la géographie des pays qui abritent les monuments arméniens encore peu connus. Dans cette perspective, les collections américaines sont visées pour la numérisation. Ainsi, après la clôture officielle du programme européen (le 30 octobre 2011), le travail commencé va continuer, ce qui entraînera naturellement un élargissement du cercle des partenaires.

Toute information complémentaire est accessible au public sur le site Internet **www.armeniaca.eu**.

Garik Galstyan

## SUR LE CHEMIN DE NOUVEAUX SOMMETS

Le nom de Tigran Gharamyan est connu dans le monde des échecs arméniens. Son premier butin a été la brillante victoire au championnat des juniors d'Arménie. Il a également reçu le diplôme de premier niveau daté du 24 avril 1997. Dans les années suivantes et jusqu'en 2002, il remporte quelques prix importants parmi les jeunes de moins de 16 ans, au tournoi éclair et lors des Jeux estudiantins interuniversitaires. Ainsi, il s'est sérieusement imposé pour les supporters de ce sport «intellectuel» et dans le cercle des joueurs d'échecs.

Il y a déjà quelques années que Tigran s'est installé en France, à Lille, où en un court laps du temps il a attiré sur lui l'attention de la fédération locale des échecs. Ici on place beaucoup d'espoirs sur le jeune joueur d'échecs qui mobilise toutes ses forces pour satisfaire ces attentes.

Le double champion d'Arménie garde hautement son titre à des milliers de kilomètres de sa patrie, lors des championnats européens. La plus haute manifestation de son talent est sa brillante victoire remportée à Capelle la Grande et sa 87$^{e}$ place occupée parmi les 100 meilleurs échequistes du monde. Avec cette victoire, il a cumulé 2650 points Elo.

«Արմենիակա» ծրագրի պաշտոնական մեկնարկն ազդարարվել է 2004 թ. հոկտեմբերի 13-ին Երևանի «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնում: Բուն ծրագրի իրագործումը սկսվել էր երկու տարի առաջ՝ 2009 թ. հոկտեմբերի 31-ին: Ռայմոնդ Կևորկյանը, ՀՃՈՒԿ-ի տնօրեն Սամվել Կարապետյանը, Գայանե Կասնատին, այս կայքէջի ստեղծող Հովիկ Կիզողյանը ներկայացրել էին հայկական ճարտարապետությանը նվիրված լուսանկարային արխիվների տվյալների նոր շտեմարանը՝ բաղկացած 40 000 հուշարձանների 300 000 թվայնացված փաստաթղթերից: Հոկտեմբերի 14-ին Երևանի Հ. Թումանյանի թանգարանում տեղի ունեցավ հայկական ճարտարապետության ուսումնասիրության առաջամարտիկներին նվիրված ցուցահանդեսի հանդիսավոր բացումը: Գայանե Կասնատիի կազմակերպած ցուցահանդեսը այնուհետև պետք է շրջագայեր աշխարհի այլ երկրներում: Ահա հենց դա էլ ներկայացվեց Բրյուսելում 2011 թ. դեկտեմբերի 3-ից մինչև 2012 թ. հունվարի 7-ը:

Այսպիսով, երկլեզու (հայերեն և անգլերեն) ինտերնետային կայքէջի մեկնարկը նշանակում է կատարված մեծ աշխատանքի հստակեցում: Սա հիմք է դառնում ապագա միջազգային համագործակցության համար, որի նպատակը կլինի մշտապես լրացնել ներկայիս տվյալների շտեմարանը և ընդարձակել երկրների աշխարհագրությունը, որոնց հողի վրա գտնվում են դեռ քիչ ծանոթ հայկական հուշարձաններ: Այս ուղղությամբ արդեն աշխատանք է տարվում. խոսքը ամերիկյան հավաքածուների թվայնացման մասին է: Այսպիսով, եվրոպական ծրագրի պաշտոնական ավարտից հետո (2011 թ. հոկտեմբերի 30) սկսված աշխատանքը կշարունակվի, որի ընթացքում էլ գործընկերների թիվը կավելանա:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել հետևյալ ինտերնետային կայքէջը՝ **www.armeniaca.eu**:

Գարիկ Գալստյան

## ՆՈՐ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐԻ ՆՎԱՃՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Տիգրան Ղարամյանը հայտնի անուն է Հայաստանի շախմատային աշխարհում: Նրա առաջին «ավարը» Հանրապետության պատանիների առաջնության փայլուն հաղթանակն էր և առաջին կարգի դիպլոմը, որը տեղի է ունեցել 1997 թ. ապրիլի 24-ին: Հաջորդող տարիներին՝ մինչև 2002 թվականը, նա մի քանի բարձրակարգ մրցանակներ է շահել մինչև 16 տարեկան պատանիների, արագ մրցաշարի, միջբուհական ուսանողական խաղերի ընթացքում՝ լուրջ հայտ ներկայացնելով հնագույն այս «մտավոր» մարզախաղի երկրպագուների և շախմատիստների շրջանում:

Արդեն մի քանի տարի է, ինչ Տիգրանը հաստատվել է Ֆրանսիայում՝ Լիլ քաղաքում, ուր կարճ ժամանակում գրավել է տեղի շախմատի ֆեդերացիայի ուշադրությունը: Այստեղ մեծ

Tigran Gharamyan / Տիգրան Ղարամյանը

p., préface de

Parmi ses parents et amis, les échecs sont une occupation appréciée, une satisfaction des prétentions des amateurs. La vocation des joueurs d'échecs professionnels est tout à fait différente. Ici il faut mobiliser à la fois le cerveau, l'esprit, l'habileté, les manœuvres intelligentes et la résistance physique. C'est ici que l'art et la science s'entrecroisent. Selon les témoignages des spécialistes et des commentateurs sportifs, Tigran Gharamyan a atteint le niveau de la classe internationale et il combine savamment tout cela pour atteindre le résultat escompté. Il a été remarqué et intégré dans des clubs non seulement de France, mais également d'Allemagne et de Belgique.

Comme l'a avoué Tigran, il existe encore des choses gigantesques devant lui. Représenter l'équipe nationale de France est son rêve. Espérons que la bonne chance lui sourira et qu'après avoir obtenu la nationalité française, le souhait du jeune joueur d'échecs se réalisera. Mais, en attendant, il s'entraîne en permanence, seul ou avec des amis, analyse les variantes de jeux des titans du monde des échecs, lit, entraîne des futurs joueurs d'échecs. De la même manière qu'il a essayé, dès quatre ans, de bouger sur l'échiquier les figures, aujourd'hui il transmet son expérience aux amateurs de ce sport beau et riche.

Jacqueline Kasparian

Tigran Gharamyan remporte le 7e Open International de Vandoeuvre (23 décembre 2010)
Տիգրան Ղարամյանը՝ Վանդովրի 7-րդ միջազգային բաց առաջնության հաղթող (2010 թ. դեկտեմբերի 23)


Pour contact et pour toute remarque, vous pouvez nous joindre aux adresses suivantes :
Par mail : aadelille@gmail.com
Par courrier : 12, Rue Blériot, 59 260, Hellemmes-Lille, France
Par téléphone : 09.53.10.84.75, 09.51.36.49.21



Այս համարին առնչվող բոլոր դիտողությունները կարող եք մեզ հայտնել հետևյալ հասցեներով՝
Էլեկտրոնային փոստ՝ aadelille@gmail.com
Փոստային հասցե՝ 12, Rue Blériot, 59 260, Hellemmes-Lille, France
Հեռախոսներ՝ 09.53.10.84.75, 09.51.36.49.21



Ֆրանսերեն հրատարակչության պատասխանատուներ՝
Լուիզեթ Լամարշ, Գարիկ Գալստյան
Հայերեն հրատարակչության պատասխանատու՝
Գարիկ Գալստյան
Թարգմանությունները՝ Գարիկ Գալստյանի
Սրբագրությունները՝ Մարգարիտ Խաչատրյանի (հայերեն)



ISN 2117-5772


հույսեր են տածում երիտասարդ շախմատիստի նկատմամբ, և նա եռանդ չի խնայում այդ սպասելիքներն արդարացնելու համար:

Հայաստանի կրկնակի չեմպիոնը իր տիտղոսը բարձր է պահում նաև հայրենիքից հազարավոր կիլոմետր հեռու՝ եվրոպական չեմպիոնատներում: Նրա տաղանդի բարձրագույն արտահայտությունն էր Կապել լա Գրանդ քաղաքում տարած փայլուն հաղթանակը և աշխարհի լավագույն 100 խաղացողների շարքում 87-րդ տեղը զբաղեցնելը: Այդ հաղթանակով նրա հավաքած էլօ-ների թիվը հասավ 2650-ի:

Բարեկամների, ընկերների շրջապատում շախմատը սիրված զբաղմունք է, սիրողական հավակնությունների բավարարում: Այլ է պրոֆեսիոնալ շախմատիստների առաքելությունը: Այստեղ պետք է մոբիլիզացնել և՛ ուղեղը, և՛ միտքը, և՛ ճարպկությունն ու խելացի մանևրները, և՛ ֆիզիկական ուժերը: Այստեղ միահյուսվում են արվեստն ու գիտությունը: Միջազգային ճանաչման հասած Տիգրան Ղարամյանը մասնագետների և մարզական մեկնաբանների վկայությամբ հմտորեն զուգակցում է այս ամենը՝ հասնելով բաղձալի արդյունքի: Նրան նկատել և իրենց ակումբներում անդամագրել են Ֆրանսիան, Գերմանիան և Բելգիան:

Ինչպես խոստովանել է Տիգրանը, առջևում դեռ հսկայական անելիքներ կան: Ֆրանսիայի ազգային հավաքականում հանդես գալը նրա երազանքն է: Հուսանք, որ բախտը կժպտա նրան, և քաղաքացիություն ձեռք բերելուց հետո կիրականանա երիտասարդ շախմատիստի ցանկությունը: Իսկ մինչ այդ՝ շարունակ մարզվում է, մենակ, թե ընկերների հետ, վերլուծում շախմատային հսկաների խաղային տարբերակները, կարդում, մարզում պատանի շախմատիստներին: Ինչպես ինքն է դեռևս չորս տարեկանից փորձել խաղատախտակի վրա տեղափոխել ֆիգուրները, այնպես էլ այսօր իր փորձն է փոխանցում այդ գեղեցիկ ու հարուստ մարզաձևի սիրահարներին:

Ժակլին Կասպարյան

Tigran Gharamyan entraîne des futurs joueurs d'échecs.
Տիգրան Ղարամյանը մարզում է ապագա շախմատիստներին


Responsables de publication en français :
Louisette Lamarche, Garik Galstyan
Responsable de publication en arménien : Garik Galstyan
Traductions : Garik Galstyan
Corrections : Margarit Khatchatryan (arménien)



Imprimé par nos soins.
À ne pas jeter sur la voie publique.



Տպագրված է մեր միջոցներով:
Չգցե՛լ հասարակական վայրերում:



ISN 2117-5772